ՏԱՐԻ Ե.    ՇԱԲԱԹ 1 ՅՈՒՆԻՍ 1902    ԹԻՒ 421

# ՇԱՐԺՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար
տարեկան 15
վեցամսեայ 8

Ռուսիոյ համար
Տարեկան 3 ռ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ և երեսին անկիւնացեալներու համար 20 ս. ...

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Rédaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
20 ՍԱՆԹԻՄ

Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## ԾՈՎԱԿԻՆ

Լո՛ւ ծովակ, ալ մի՛ ողբար անցեալի
Կորած փառքը, սուգը անդարձ կորուստին
Պիտի ծաղկին ծըլին դալար վերստին
Մեր հայրենի խըրոխտ լեռներն անձկալի ։

Թո՛յլ տուր քալենք դէպ մարտիրոս այն աշխարհ
Զոր այժմ վատ բռնաւորներ կաւերեն
Ասկէ վերջը կռուի կոչը կայ վերէն
Խաղաղ նիրհէ՛ ու տուր մեզ լո՛յն ճանապարհ ։

Թո՛յլ տո՛ւր քալենք դէպ ի կռիւ, դէպ ի մահ
Մեր հարազատ, թա՛րմ ուժերուն մենք վստահ
Վերջ մը տալու մեր սա կեանքին անժըպիտ

Թո՛ղ մեզ համար վառօդ դառնայ քու աւազ
Ալիքներուդ ուժը մեզ տուր, մենք զինուած
Փշրենք բաղդին նեւ ժայռերը բիրտ, կոպիտ ։

ՎԷՏԱ

## „ՇԱՐԺՈՒՄ"Ի ԶԱՄԲԻՒՂԸ

Անցեալ օր մի բարեկամից նամակ ընդունեցի, որով մեղադրում էր թէ ես վստահութիւն չեմ ունեցել իր անկեղծութեան վրա, ու մի որոշ խնդրի մասին հրապարակով իր կարծիքից բոլորովին տարբեր կարծիք եմ յայտնել։ Այդ բարեկամը մոռանում էր որ ուրիշ մի քանի վստահելի բարեկամներ էլ, որոնք այդ խնդրի հետ անձնապէս ոչ մի առնչութիւն չունեն, նոյնպէս անկեղծօրէն իմ արտայայտած կարծիքն են յայտնել։

Սրա մասին հրապարակով խօսում եմ միայն նրա համար, որ ցոյց տամ թէ մեր մէջ որքան անտեղի պահանջներ են լինում խմբագրութիւնների հանդէպ։ Ամէն մի բարեկամ, ամէն մի թղթակից, ամէն մի աշխատակից նոյն իսկ ամէն մի բաժանորդ հիւանդութիւն ունի խմբագրութիւնից պահանջել հասարակական խնդիրների վրա նայել և դատել իրեն խելքով, դատողութեամբ և տեսակէտով։

Եւ այս հիւանդութիւնը համաճարակի կերպարանք է ընդունել մեր մէջ. զարգացած, ոգէտ, բարձր դիրքի տէր, համեստ դիրքի տէր և ծանօթներ ու բարեկամներ միշտ այդ տեսակ պահանջներով են ներկայանում խմբագրութիւններին։

Ես չեմ կարծում որ ոևէ ժողովրդի խմբագրութեան հանդէպ այդ տեսակ յիմար պահանջներ դրվին։

* *

Բացի պահանջողներից կան և քծնողներ. այդ քծնողներն էլ թրքական զզվելի կեղծաւորութեամբ, գովեստներ շռայլելով են մօտենում խմբագրութիւններին իրենց գրութիւնները տըպագրել, իրենց պաշտպանած անարդար դատը, անձնական խնդիրները պաշտպանել տալու համար։

Զզվելի են այդ տեսակ գրութիւնները և նրանց հեղինակները. այնքան զզվելի, որ գրութիւնները կարդացած միջոցին մարդ փախչել է ուզում։ Էլ ի՞նչ կերպարանք ասես չեն ընդունում այդ ստրկացած, քծնող տիպերը, և աւելի փոքրանում, աւելի նսեմանում են որչափ բարձր, գոնէ կարծեցեալ բարձր դիրքի տէր են լինում։

Քծնումի և յիմար պահանջումների նմուշ գրութիւններ չը կան «Շարժում»ի խմբագրական զամբիւղի մէջ. և եթէ մի օր մըտածենք ուղղակի այդ գրութիւնները հրատարակել, մեր ընթերցողները յիմարութեան և ստրկութեան լեռներ պէտք է տեսնեն. լեռներ որոնք ճնշում են մեր խորհող ու մտածող յորջորջված սրտերի և մտքերի վրա։ Բայց թող չը վախենան մեր ընթերցողները, այդ տեսակ պատժի չենք ենթարկի նրանց։

ՎԱՐԴՕ

## ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ամէն կրակի մէջ է. Թուրք տեղական զօրքերը արաբական ապստամբութիւնը ճնշելու անկարող վիճակի մէջ կը գտնուին. Նոր զօրք կուզուի և Սուլթան Համիտ կարելիութիւնը չունի նոր զօրք ղրկելու. դրամ, դրամ չըկայ. Թուրքիոյ յաւիտենական միշտ անբուժելի հիւանդութիւնը «վէրէմ»ը։

Ապստամբելու կը պատրաստուի Ալպանիա. Մակեդոնիան ալ կրակ ու բոցի մէջ է. Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ յուզումը մեծ է հոն, մանաւանդ Ֆիրմիլեանի պատճառով. կըսեն թէ պուլկարները քարկոծեր են ռուսաց հիւպատոսարանի պատուհանները։ Թուրքերն ալ այդ խնդրի մէջ պուլկարներուն համակիր են և զանոնք կը քաջալերեն։

* *

Ռուսիոյ ուրիշ նահանգներու մէջ ես գիւղացիներու կողմէն նոր խռովութիւններ սկսեր են։ Եւրոպական թերթ մը կը հաղորդէ որ ներքին գործոց նախարար Բլէվէ որոշած է գիւղացիներու վրայ մնացած հին տուրքերը նուիրել տալ։ Եթէ ճիշդ է, առ փաստ մըն է որ ռուս կառավարութիւնը որչափ ալ արտաքուստ պաղարիւն և զօռող կը ներկայանայ, ներքուստ ահագին կարեւորութիւն կուտայ գիւղացիներու շարժման և կուզէ կերպով մը անոնց սիրտը գրաւել։

* *

Անգլիոյ և Թրանսվալի միջեւ կայացած հաշտութիւնը իր որոշ ազդեցութիւնը գործած է Անգլիոյ հակառակորդներուն վրայ։ Գերմանական և Ռուսական թերթերը բարկացած այդ յաջողութենէն կուզեն անոր նշանակութիւնը նսեմացնել և այժմէն կսկսին վախնալ որ Անգլիա զինքը դժուար կացութենէ մը ազատելով անշուշտ պիտի աշխատի իր նախկին դիրքը ձեռք բերելու արտաքին քաղաքականութեան մէջ։

Եւրոպական պետութիւնները արտաքին քաղաքականութեան մէջ ամէնքն ալ շահամոլ են, այսու ամենայնիւ Անգլիոյ քաղաքականութիւնը, որ կրկին աւելի մեծ շահամոլութեան արդիւնք է, նպաստաւոր է շատ մը կէտերու մէջ, մանաւանդ փոքրիկ ժողովուրդներու համար. ուստի մեզ համար ալ փափագելի է որ Անգլիա իր երբեմնի ազդեցիկ դիրքին տիրանայ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներու մէջ։

* *

Կուզեմ Հայաստանի մասին խօսիլ. բայց ի՞նչ խօսիմ. «Դրօշակ» իր վերջին խմբագրականի մէջ կը յայտարարէ որ չնչին փոփոխութիւն մը անգամ չըկայ Հայաստանի կացութեան մէջ. Նոյն հարստահարութիւնները, նոյն տանջանքները, նոյն վատութիւնները կը թագաւորեն հոն, Հայաստան աշխարհին մէջ։ Եւ իրօք ալ այդպէս է. ի՞նչ փոփոխութիւն կրնայ ըլլալ երկրի մը մէջ, ուր բռնաւորը սանձահարող ոչ մէկ ուժ կայ։

Չէ փոփոխութիւն մը կայ. կացութիւնը աւելի անհանդուրժելի դարձած է, ինչպէս կըսէր «Խթան» լրագիրը։

Այո փոփոխութիւն մը կայ. հայ վարդապետներն անգամ կը սարսռին այդ փոփոխութեան հանդէպ և բողոք բողոքի վրայ կը ղրկեն Թուրք կառավարութեան և մեր լկտի Օրմանեանին։

Հայ ժողովուրդին վիճակը որքան գէշցած է, որ կոտորածներու հանդէպ անգամ անտարբեր մնացող հոգեւորականութիւնը այսօր բողոքող դարձած է։ Անտարբեր է միայն Օրման փաշան, անտարբեր իր ճարպոտութեանը մէջ, շրջապատուած իր կաշառակեր ազգականներով։ Մինչեւ ե՞րբ պիտի տեւէ այս, ոչ ոք կրնայ որոշ պատասխան մը տալ։

### ՀԱՆԳՈՒՑԱԿՈՒԹԻՒՆ

—օ—

Անմոռանալի Պետրոս Սէրէմճեանի աշխատութիւններու հրատարակութեան համար Սօֆիայի Սերոբ—Աղբիւր խմբէն ստացանք 30 լեւ. ուրեմն նախորդ 205 լեւ 30 սանթիմի հետ, այդ նպատակի համար խմբագրութեանս քով կը գտնուի ընդամէնը 235 լեւ 30 սանթիմ։

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսոյ Մայր—Եկեղեցիին վերանորոգութեան ձեռնարկը որ այնքան աղմկալից թափով սկսելու յայտարարութիւններ եղան, յետաձգուած է յառաջիկայ ամառուան։

—Պոլսոյ Ուսումնական խորհուրդը Պոլսոյ դպրոցները վարելու համար կրթական տեսչի մը անհրաժեշտութիւնը յայտարարած է։

—Հանգուցեալ Աղէքսանդր Երէցեանի գրքերուն մէջ գտնուեր են բազմաթիւ ձեռագիր վրայ թմգաւորներու փաւերագրեր։ Երկու հնատէր վրացիներ այդ փաւերագրերը գներ են հան գուցեալի այրիէն։

—Իզմիրէն կը հաղորդեն թէ լուր կը պտտի որ ձերբակալուած հայ յեղափոխականը Պոլիս տեղափոխեր են։

—Մելքիսեդէկ եպիսկոպոսի հրաժարական տալու մասին կը խօսուի։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ֆիրմիլեանը ձեռնադրուեր է Սելանիքի մէջ. կըսուի թէ Պոլիս պիտի գայ Սերպիոյ թագաւորին այցելած միջոցին հոն գտնուելու համար։

Մայիս 27ին Սելանիքի բանտէն 50 պուլկար աքսորեր են Փոքր Ասիա։

—Սէրէսի մէջ Թուրքերը վար են առեր պուլկարական գործակատարի դրօշակը։ Դրօշակը վար առնելու հրամանը Պոլսէն տրուած է կըսեն։

—Ռուսիայէն Թուրքիա վերադարձող քանի մը հարիւր հայ գաղթականները ձերբակալուած և սահմանագլուխի քաղաքներուն բանտերը նետուած են։

ՌՈՒՍԻԱ

Պուլկարիոյ Իշխանը արդէն Պետերպուրկ հասեր է և ընդունուեր է վեհապետներուն փայլել կերպով։

—Ռուս մամուլը մեծ համակրութեամբ կը խօսի Իշխան Ֆէրտինանտի մասին։

—Քիէվի նահանգի մէջ եւս գիւղացիները խռովութիւններ հաներ են։

ԹՐԱՆՍՎԱԱԼ

Մինչեւ այժմ մօտ 5000 Պէէր անձնատուր եղած են իրենց զէնքերը յանձնելով։

—Նախագահ Քրիւկէր մերժած է անգլիական նաւով Թրանսվալ երթալ. բայց ընդուներ է հոլանտական թագուհուն առաջարկը որ Քրիւկէրի տրամադրութեան տակ նաւ մը դրեր է։

—Անգլիական կառավարութիւնը Քրիւկէրէն չի պահանջեր որ հպատակութեան ձեւակերպութիւնները կատարէ, բայց պահանջած է որ իր ագարակէն դուրս չելլէ։

—«Տէյլի Մէյլ» թերթը կը հաղորդէ որ Լօրտ Քիչնէրի հրամանով հաշտութեան քանի մը հակառակ անձեր ձերբակալուած են։

ԱՒՍՏՐԻԱ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Լէմպէրկ քաղաքի մէջ բանուորական մեծ յուզումներ տեղի ունեցեր են. խաղաղութիւնը վերահաստատելու համար զօրք մը ղրկեր է։ Երկու կողմէն ալ վիրաւորեալներ և սպաննուածներ կան։

—Պօսնա—Հէրցէկօվինայի բնակիչները շատ դժգոհ են իրենց կառավարիչ Կալլայէն և՝ պատգամաւորութիւն մը ղրկեր են կայսեր բողոքելու համար։

ՖՐԱՆՍԱ

Երեսփոխանական ժողովի մէջ նախարարապետ Գոմբ կարդացեր է նախարարութեան յայտարարութիւնը, որով պարզեր է թէ իրենք ալ Վալտէք—Ռուսոյի ուղղութեամբ պիտի ընթանան։

—Թերթերը լաւ կը խօսին նոր նախարարութեան մասին, արմատական և ընկերվարականները շատ ուրախ են որ քաղաքական ամենայառաջադէմ տարրերը մեծամասնութիւն կը կազմեն։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական կառավարութիւնը ազատ արձակեր է Պօէր գերիները, սպաները առանց երդումի, միայն պատւոյ խօսք տալով արձակուեր են։ Ամենքն ալ կշտապեն իրենց տեղերը վերադառնալ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնայէն կը հաղորդեն — չը նայելով Մակեդոնիայի մէջ տիրող խաղաղութեան ամեն օր փորձեր կըլլան գաղտնի կերպով Յունաստանէն Մակեդոնիա զէնք մտցնել։

Քանի մը օր առաջ Լարիսայի ոստիկանութիւնը անցայի Ելլասոնցիներէն գրաւեր է բաւական թիւով հրացաններ որոնք Թուրքիա պիտի տարուէին։

—օ—

ՍԵՐՊԻԱ

Սուլթանը իրատէով մը հաստատած է Սերպիոյ և Թուրքիոյ միջեւ կայացած առեւտրական դաշնագրութիւնը։

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—օ—

Նախկին Հայ ուսուցիչ մը՝ որ Զուիցերիական վարժապետանոցի մը մէջ վերջերս իր ուսումը կատարելագործած է՝ պաշտօն կը փնտռէ Թիւրքիայէն դուրս գտնուող վարժարանի մը մէջ:

Դիմել՝ Ն. Կորկոտեան Էֆօղ
Նորմալ Նիւշատել
(Զուիցերիա)


ԱՆՈՒՇԱՒԱՆ

## ՀԱՑԻ ՀԱՄԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ
Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայելու համար։

Բաժնեգինն է 1 ֆրանք. բոլոր ծախքը հրատարակչին վրայ։

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն։

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչի ընկերութեան»։

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին։

Մուրատ Երանոսեան
(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

## ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Հանի Բանաֆօ
Ամառնային շրջան
«ՎԷՍԷԼՕ»
Հայ դերասանական խմբին
այս օրիշեր ժամը 9ին պիտի ներկայացուի՝

ԵՐԿՈՒ ԿՈՐՍՏԵԱԼ ԵՂԲԱՅՐՆԵՐ
ողբերգական թատերախաղ 3 արար

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐՔ
ՀՕՎԻՒՆ ՈՒ ՀՕՎՈՒՈՒՀԻՆ

Պ.Գ. Յակոբեանի և Օ. Բօզալիի կողմէ

ՊԱԼԷԴ

Օրիորդ Բարասֆօյի կողմէ

## ԿԵՂԾ ԿՏԱԿԸ

խիստ ծիծաղաշարժ զաւեշտ 3 արար
Պ. Ա. Պէնլեանի կողմէ

Օր. Բարասքօ Թրաբէզի վրայ գլխիվայր 100 քիլոնոց թնդանօթ մը ակռաներէն կախած պիտի պայթեցնէ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն ՌԸՆԷ ՏԸ ՊՕՆ-ԺԷԻ հեղինակութիւնը եղող

## ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

Առաջին եւ Երկրորդ թերթերը

Ամեն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար, գիրքը մասամբ, 8ական երեսներէ բաղկացեալ, շաբաթը երկու թերթ պիտի հրատարակուի և իւրաքանչիւր 8ական երեսը պիտի ծախուի 5 սանթիմի:

Ամբողջ վէպը 24-25 թերթէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժանորդագինն 1 Ֆր.: Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի 1.20:

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ համար երեք թերթ մէկ ծրարով կը ղրկուին, իսկ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարի մէջ. փոստի ծախքը հրատարակչին վրայ է:

Դիմել հետեւեալ հասցէին՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ, ՎԱՌՆԱ:

Դրամի փոխարէն նամականիշ ալ կընդունուի:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—օ—

«ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ստեփ. Եարճանեանի «Դիւցազնօրէնք» ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէֆ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Դարիւսի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա


### ԱԶԴ

—օ—

Մանուկ Տէր Մանուէլեան 55-60 տարեկան ապիտակահեր Վանի կարճկանի Օղվանց գիւղացի, տարիէ մը ի վեր է Սուլինայէն մեկնած է Ռումանիոյ Կրայիօվայ և Թուրնու-Սեվերին քաղաքներ և անկից ի վեր անյայտ եղած է, իրմէ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի հաղորդել Սուլինա պրն. Մանուկ Յակոբեանին։


Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна